ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սերգեյ Բարխուդարյան
ՀՊՄՀ-ի քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը միտված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն: Միևնույն ժամանակ, կրթություն ստանալու ձգտումը պատմականորեն ձևավորված այլ նաև հոգևոր և մշակույթային արժեքներին տիրապետելը, տվյալ հասարակության բարոյական չափանիշները պահպանելն է:

Կրթությունը ժամանակակից մարդու արժեհամակարգում առաջնային տեղերից մեկն է զբաղեցնում: Այդ պատճառով էլ քաղաքակիրթ պետությունները հսկայական միջոցներ են ներդնում կրթության, դաստիարակության ուղղությամբ՝ գիտակցելով, որ այդ միջոցները ապագայում կվերադարձվեն հասարակությանը՝ գիտական հայտնագործությունների, մշակութային արժեքների, որակյալ աշխատուժի և այլնի ձևով[1]:

Կրթության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է, իսկ դրա իրականացումը՝ մարդկանց միջև հավասարության և ազատության հասնելու կարևորագույն միջոց: Ելնելով դրանից՝ կրթության ոլորտին վերաբերող մի շարք միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են՝ «Մարդու իրավունքների ընդհանուր հռչակագիրը» (հոդվ.26), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (առաջին արձանագրութ. 2-րդ հոդվ.) «Տնտեսական, սոցիալական և մշակույթային իրավունքների մասին» միջազգային Դաշնագիրը (13,14 հոդվ.), «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիան (հոդվ.29), «Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին» Կոնվենցիան (1960 թ.), հռչակում են յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը:

Մարդկային ներուժի ձևավորման խնդրում ներկայումս աշխարհի մի շարք երկրներում մեծ նշանակություն է տրվում կրթությանը, մասնավորապես բարձրագույն մասնագիտական կրթությանը: Այսօր արդեն շատ երկրներում կրթության իրավունքը ամրագրված է սահմանադրորեն, որը կարելի է դասել մարդկության կարևորագույն նվաճումների թվին: Ներկայումս հասարակական հարաբերությունների զարգացումը ենթակա է ինտեգրման գործընթացների ազդեցությանը՝ տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, տեղեկատվական և կյանքի այլ ոլորտներում: Նման իրավիճակներում բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը առանձնակի նշանակություն է ձեռք բերում, քանզի այն նորարարական տնտեսության ձևավորման պայման է, պետության արդյունավետության հիմնասյուն՝ խարսխված նրա քաղաքացիների քաղաքացիական ակտիվության վրա:

[1] Տե՛ս Այվազյան Ն.Ա. Սահմանադրական իրավունք. Դասագիրք բուհերի համար: Ե., ԵՊՀ հրատ., 2012, էջ 305:

Կրթության իրավունքը, համարվելով հիմնարար սկզբունք և օրենսդրորեն ամրագրված լինելով ՀՀ հիմնական օրենքում, հանդես է գալիս նաև որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր: Կրթության իրավունքի տարատեսակներից է բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը: Ուսումնառության որոշակի ձևն ընտրում է քաղաքացին՝ տարբեր գործոններից ելնելով՝ տարիք, կրթական մակարդակ, մասնագիտական պատրաստվածություն և այլն: Այսպիսով, եթե կրթության իրավունքի իրականացումը որոշակիորեն կախված է լրացուցիչ իրավական գործոններից, ապա կրթության սահմանադրական իրավունքն ունի համընդհանուր բնույթ:

Ընդհանուր առմամբ բարձրագույն կրթության համակարգը բարդ, փոփոխվող մեխանիզմ է: Տվյալ ոլորտում մշտապես կատարվող բարեփոխումները, առանց չափազանցության, չեն կարող իրենց ազդեցությունը չունենալ քաղաքացիների ակնկալիքների վրա: Բարձրագույն կրթության բարեփոխումների ընթացքը, Բոլոնիայի գործընթացին ՀՀ անդամակցության հետ կապված, մեր հասարակության կողմից միանշանակ չի ընկալվում: Հայաստանում կրթության բարեփոխումն իրականացվում է նոր հասարակության ձևավորման բավականին բարդ պայմաններում, ինչը որոշակի ազդեցություն է ունենում բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրականացման գործընթացի վրա:

Բարձրագույն կրթությունը համաշխարհային չափանիշներին հասցնելը պահանջում է պետության և նրա մարմինների նյութական և կազմակերպական զգալի ջանքերի ներդրում՝ ներդրումային գրավչության, որակյալ բարձրագույն կրթության մատչելիություն, անհատական ֆինանսավորման սկզբունքի անցում և կրթական ծառայությունների արդյունավետ շուկայի ձևավորում: Այս բոլորը ենթադրում են բարձրագույն կրթության գործընթացի վերազինման անհրաժեշտություն, որը պետք է իրականացվի խիստ մտածված[1]:

Կրթության բնագավառում պետության առաջնային խնդիրներից են անվճար բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովումը՝ յուրաքանչյուրին հավասար մեկնարկային հնարավորություններ ընձեռելու ճանապարհով, և կրթության համակարգի զարգացման համար կազմակերպաիրավական, սոցիալական և ֆինանսատնտեսական պայմանների ստեղծումը: Կրթական համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրության հիմքերը դրվեցին 1995թ. Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրության ընդունումով, որում ամրագրվեց յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը: Մասնավորապես, դրա 35-րդ հոդվածը հռչակում էին կրթության մատչելիությունը և անվճար լինելը, ընդ որում բարձրագույն կրթության համար՝ մրցույթային հիմունքներով: Ճանաչվում էր նաև կրթության ոլորտում ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեության իրավունքը: Չնայած կրթության իրավունքն ամրագրող Սահմանադրության տվյալ հոդվածը կատարյալ չէր, բայց հիմնականում համահունչ էր կրթության միջազգային չափանիշներին: Սակայն իրավական տեսանկյունից զերծ չէր թերություններից. ճանաչվում էր ոչ թե յուրաքանչյուր մարդու, այլ միայն քաղաքացիների կրթության իրավունքը, սահմանված չէր պետության կողմից պարտադիր երաշխավորվող կրթության նվազագույն մակարդակը և այլն: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը վերարտադրեց 1995թ. Սահմանադրության դրույթ-

[1] Տե՛ս **Серегина С.П.** Конституционное право на высшее образование в Российской Федерации: Автореферат дисс. на канд. юрид.наук, Саратов, 2006, էջ 3:

ները կրթության իրավունքի երաշխավորման վերաբերյալ, իսկ որոշ դեպքերում ընդլայնեց դրանց ծավալը: Մասնավորապես սահմանադրական նորարարություն էին համարվում կրթության իրավունքի հետևյալ երաշխիքները՝ ա) հիմնական ընդհանուր կրթության պարտադիրությունը, բ) բուհերի ինքնավարության իրավունքի ճանաչումը, առանց դրա սահմանադրական երաշխիքների որոշակիացման, գ) պետության պարտավորությունը ֆինանսապես և այլ կերպ աջակցելու բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին: 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը[1] (ի տարբերություն 1995 թ. ընդունված Սահմանադրության և 2005 թ. խմբագրականի) քննարկվող դրույթի իրավական բովանդակության մեջ մտցրեց էական փոփոխություն՝ անվճար բարձրագույն կրթությունը երաշխավորելով նաև քաղաքացիություն չունեցողներին: Մյուս նորամուծությունը, որ իրավաբանական տեխնիկայի տեսակետից ճիշտ լուծում է, այն է, որ անվճար մասնագիտական կրթությունը երաշխավորվում է «օրենքով սահմանված դեպքերում և կարգով»: Այսպիսով, 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք պետական ուսումնական հաստատություններում մրցույթային հիմունքներով բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունի: Անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով»:

Կրթության վերաբերյալ սահմանադրական նորմերը իրենց ամրագրումը ստացան «Կրթության մասին» ՀՀ օրենքի[2] նորմերում. մասնավորապես՝ օրենքի 6-րդ հոդվածում, որում սահմանվում են կրթության իրավունքի պետական երաշխիքները՝ հաստատելով ՀՀ Սահմանադրությամբ հռչակված անվճար կրթության բոլոր մակարդակները: Ըստ օրենքի՝ կառավարությունը սահմանում է կրթության անվճար տեղերի քանակը յուրաքանչյուր մասնագիտության գծով (պետպատվեր), ինչպես նաև մասնագիտական կրթության համար բյուջեից կատարվող հատկացումների չափը: Բուհերին իրավունք էր տրվում իրենց հատկացված ընդհանուր չափաքանակի շրջանակներում ինքնուրույն սահմանել վճարովի և անվճար տեղերի քանակը՝ յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսելով անվճար ուսուցման տեղեր՝ առնվազն տասը տոկոսի սահմաններում («Կրթության մասին» ՀՀ օրենք, 28-րդ հոդվ.): Ելնելով իրական հնարավորություններից՝ բուհերին թույլատրվում էր վճարովի հիմունքներով հրամանագրել նաև ընդունելության մրցույթից դուրս մնացած դիմորդներին:

Բարձրագույն կրթության մատչելիության սկզբունքը կարևորագույններից մեկն է համարվում, քանզի այն ընդգրկում է մարդու իրավունքների և պարտականությունների մի ամբողջ համալիր: Սակայն կրթության նախորդ աստիճանների համեմատ այս սկզբունքն ունի էական տարբերություններ: Բուհերի վերաբերյալ տվյալ սկզբունքը, ինչպես վերը նշվեց, չի բացառում բուհ ընդունվելու իրականացումը «մրցույթային հիմունքներով», այսինքն՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքն իրականացվում է «յուրաքանչյուրի հնարավորությունը մրցույթային հիմունքներով» սկզբունքի հիման վրա: Դրա հետ կապված՝ բարձրագույն կրթության մատչելիության սկզբունքը պետք է մեկնաբանել ոչ՝ թե բառացիորեն, ոչ թե անհատական՝ բացարձակ մատչելի յուրաքանչյուրին, այլ սոցիալական իմաստով. մատ-

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն 2015թ.(փոփոխություններով):
[2] Տե՛ս Կրթության մասին ՀՀ օրենք: Ընդունված է 14.04.1999թ.:

չելի՝ անկախ մարդու սոցիալական վիճակից[1]: Դա միանգամայն համահունչ է Մարդու իրավունքների Համընդհանուր հռչակագրի սկզբունքներին, որի համաձայն՝ «... բարձրագույն կրթությունը պետք է հավասարապես մատչելի լինի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների[2], և համահունչ եվրոպական երկրների վարած ընդհանուր քաղաքականությանը»: Այսպիսով, կրթության մատչելիության հավասար պայմաններ ապահովելը և որևէ խտրականություն բացառելը հենց տվյալ իրավունքի իրականացման երաշխիք են: 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածում ամրագրված՝ պետական բուհերում մրցույթային հիմունքներով անվճար կրթություն ստանալու իրավունքին համապատասխան՝ 2006-2007 թթ. ուսումնական տարում առաջին անգամ ՀՀ պետական բուհերում գործադրվեց ռոտացիոն սկզբունքով վճարովի և անվճար տեղերի տեղակալման գործընթացը: Ըստ այդմ վճարովի և անվճար հիմունքներով ընդունված ուսանողների միջև կայանում է մրցույթ և ըստ նրանց ցուցաբերած տարեկան առաջադիմության, վճարովի համակարգում սովորող ուսանողը հնարավորություն է ստանում հաջորդ ուսումնական տարում ուսումը շարունակել անվճար համակարգում, իսկ անվճար համակարգ ընդունված ցածր առաջադիմություն դրսևորած ուսանողը տեղափոխվում է վճարովի համակարգ: Գործող օրենսդրությունը (բացառությամբ սահմանված դեպքերի՝ բանակից զորացրվածներ, նպատակային տեղեր, հատուկ սոցիալական խմբեր) այլևս չի երաշխավորում բուհում ուսանելու ամբողջ ընթացքում անվճար կրթություն, սրանով իսկ հնարավորություն տալով ավելի մեծ թվով քաղաքացիների օգտվելու վերը նշված իրենց սահմանադրական իրավունքից: Եթե ՀՀ Սահմանադրությամբ և «Կրթության մասին» ՀՀ օրենքում պետական բուհերում անվճար մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը սահմանափակված է միայն «մրցույթային հիմունքներով», ապա «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ «բուհի սովորողն իրավունք ունի օգտվելու ուսման վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով» (17-րդ հոդվ., կետ 3.7): Պետությունն ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է ըստ ուսումնական առաջադիմության (մրցույթային կարգով) վերն արդեն նշված որոշ սոցիալական խմբերին և «պետության համար կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին»[3]: Կարծում ենք՝ նման ձևով իրավակարգավորումը սոցիալական արդարության երաշխիք է, գիտելիքերն ու կարողությունները մրցակցային դաշտում վեր հանելու և գնահատելու միջոց, եթե, իհարկե, արդարացվել են օբյեկտիվ գնահատման սպասելիքները:

Բուհերի ընդունելության կանոնները նաև քաղաքացիների սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիք ենք: Անգամ հավասար մրցույթային պայմանների դեպքում կան սոցիալական խավեր (հաշմանդամներ, չքավորներ, ծնողազուրկներ, կերակրողին կորցրածներ և այլն), որոնք ի վիճակի չեն մասնագիտական կրթություն ստանալու, քանի որ օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չունեն գոնե վճարովի հիմունքներով ուսանող դառնալու: Այս հանգամանքը նկատի առնելով՝ պետությունը պարտավոր է օժանդակել այդ անապահով խավերի դիմորդները նույնպես կարողանան կենսագործել մասնագիտական կրթություն ստա-

[1] Տե՛ս **Серегина С. П.** Նշված աշխատ., էջ 20:
[2] Տե՛ս Всеобщая декларация прав человека, հոդվ. 26:
[3] Տե՛ս ՀՀ կառավարության 27 հուլիսի 2006թ.N 1183-ն որոշման 1.2 կետերը:

նալու իրենց սահմանադրական իրավունքը[1]: Նման սոցիալական խավերի համար ՀՀ կառավարությունը նախատեսում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մրցույթից դուրս (պետական բյուջեի միջոցների հաշվին) ընդունելության տեղերի նախապես սահմանված որոշակի չափաքանակ[2]: Ընդունելության քննությունների ընթացքում օրենսդրորեն ամրագրված են նաև այլ արտոնություններ առանձին կատեգորիայի դիմորդների համար: Օրինակ՝ սահմանամերձ, բարձր լեռնային և տուժած շրջաններն ուսուցչական և մասնագիտական այլ կադրերով ապահովելու համար սահմանված են նպատակային ընդունելության տեղեր՝ պետական մանկավարժական բուհերում, մարզիչներ պատրաստելու ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում, պետական ագրարային համալսարանում[3]: Այդ դիմորդները կարող են ընդունվել բուհ ընդհանուր մրցույթից դուրս, սակայն տվյալ կատեգորիայի համար ներքին մրցույթի արդյունքում:

Բնավ չթերագնահատելով անկախության տարիներից ի վեր կրթության ոլորտում կատարված կրթական բարեփոխումների իրականացման գործընթացը, կրթության ոլորտը կարգավորող մի շարք կարևոր իրավական ակտերի ընդունումը, որը կրթական իրավահարաբերությունները կարգավորող դաշտին նոր որակ հաղորդեց, այնուամենայնիվ կարծում ենք՝ բարձրագույն կրթություն ստանալու մատչելիության երաշխիքները դեռևս բավարար չեն: Բերենք մի քանի վիճակագրական տվյալներ: Հանրապետությունում տեղի է ունեցել պետական բուհերում ուսուցման ծավալի աճ: Այսպես, եթե 1998-1999 թթ. ուստարում պետական բուհերի վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված է եղել 20,5 հազար մարդ, ապա 2012-2013 թթ. Ուստարում՝ 64,9 հազ. մարդ, կամ աճել է շուրջ 3 անգամ: Ներկայումս պետական բուհական համակարգում սովորողների 84,6% սովորում է վճարովի հիմունքներով[4]: Ներկայումս հանրապետությունում վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված է 78,3 հազ մարդ կամ սովորողների ընդհանուր քանակի շուրջ 87%: Բուհական համակարգի ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է ուսման վարձերից: Հետևաբար կարելի է ենթադրել, որ ֆինանսական աղբյուրների հայթաթումը և կրթական ծառայության համար վճարվող գումարի չափը լուրջ խնդիր են բնակչության հիմնական մասի համար: Ուստի և ուսման վարձերի ձևավորման հիմնախնդիրը առանցքային է ինչպես հասարակության և առանձին անհատի, այնպես էլ բուհերի համար: Վերջին տարիներին մի շարք բուհերում նկատվում է նաև ուսման վարձերի աճ, որը բնականաբար չի նպաստում կրթության մատչելիության սկզբունքի իրագործմանը նաև վճարովի ուսուցման մասով: Այստեղ հստակեցման կարիք ունի օրենսդրական դաշտը, քանի որ օրենսդրորեն սահմանված չէ «վճարովի կրթական ծառայության» հասկացությունը, ինչպես նաև պարզված չեն դրա նկատմամբ գին սահմանելու կարգը և կարգավորման կառուցակարգերը:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի մատչելիության կարևորագույն բաղադրիչ է համարվում նաև կրթության որակի ապահովումը: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օ-

---

[1] Տե՛ս **Բալայան Գ.** Բարձրագույն կրթության իրավունքի երաշխավորման ու ապահովման հիմնախնդիրները: Երևան, «Լինգվա», հրատ., 2011թ., էջ 6:
[2] Տե՛ս ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. ապրիլի12-ի N 280-ն հրամանը:
[3] Տե՛ս ՀՀ Կառավարության 2007թ. Ապրիլի 5-ի N 513-Ն որոշումը:
[4] Տե՛ս ՀՀ սոցիալական վիճակը 2011, 2013 թթ.: Տարեգիրք. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, էջ 130, 232:

րենքում նշվում է, որ բարձրագույն կրթության բնագավառում պետության քաղաքականության խնդիրներից է բարձրագույն կրթության որակի ապահովումը (5-րդ հոդվ., կետ 1.1): Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը[1]: Դա պայմանավորված է նաև նրանով, որ հենց կրթության որակի երաշխիքներն անմիջական կապ ունեն մարդու սահմանադրական այլ իրավունքների և ազատությունների հետագա օգտագործման հնարավորության հետ: Եվ հենց որակյալ կրթությունն է երաշխավորում մասնագիտական պիտանելիությունը և հետևաբար աշխատանքի ազատության սահմանադրական իրավունքի իրագործումը ստացած մասնագիտության շրջանակներում: Կրթական ծառայությունների որակը ուղղակիորեն կախված է պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական վարպետությունից և գիտական կարողություններից: Այստեղ կարևորվում է մասնագիտական վերապատրաստումների, մասնագիտական որակների անընդհատ բարելավման խնդիրը: Չնայած բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրները միտված են նաև միջազգային գիտական համագործակցության զարգացմանը և կրթության համակարգի մրցունակության բարձրացմանը, սակայն այն դեռևս բավարար չէ («Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք հոդվ.5 1.1.3-4-րդ կետեր): Առայժմ բավականին սահմանափակ են դասախոսներին առաջատար բուհեր վերապատրաստումների գործուղելու կամ առանձին գիտաժողովներին մասնակցությունը ֆինանսավորելու հետ կապված խնդիրները: Շարունակում են սահմանափակ մնալ նաև այլ առաջատար բուհերից մասնագետներ հրավիրելու հնարավորությունները: Վերապատրաստումները, գիտաժողովներին մասնակցելը որպես կանոն անձնական նախաձեռնության արդյունք են, որոնք ենթադրում են ֆինանսական միջոցների հայթայթման երկարատև փնտրտուք: Բուհերից ստացվող աշխատավարձը լուծում է նվազագույն խնդիրներ, և շատ դեպքերում առանց այլ տեղ աշխատելու հնարավոր չէ գոյատևել: Իսկ դա իր հերթին ազդում է դասավանդման որակի և գիտական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների վրա:

Ներկայումս իրավական կարգավորումը պետք է նպատակաուղղել այնպես, որ դասավանդողի գործունեության գնահատման չափանիշը ազդեցություն ունենա աշխատանքի որակի և վերջնական արդյունքի վրա: Այստեղ կարևորվում են նաև պետության կողմից բարձրագույն կրթության ոլորտի ֆինանսավորման ավելացումը և դասախոսների աշխատավարձի բարձրացումը: Այս առումով հարկ է մշակել և ներդնել արտասահմանյան բազմաթիվ բուհերում գործող աշխատավարձի վճարման վարկանշային համակարգը, ինչը մեծապես կնպաստի նաև կրթության որակի բարձրացմանը[2]: Կարծում ենք՝ ուսումնական գործընթացում նման չափանիշներ կարող են լինել, օրինակ, կրթության նորարարական նորմերը, ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը, գիտական հրատարակումների ցանկը և այլն:

Ուսանողների գնահատումը որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն տարրերից է: Եվրոպական չափորոշիչների և ուղենիշերի համաձայն ուսանողների գնահատումը պետք է ընթանա նախօրոք հրապարակված և հետևողակա-

---

[1] Տե՛ս **Վաղարշյան Ա.** Կրթության իրավունքի սահմանադրական և օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները, «Երևան իրավունք», 2016, էջ 38:

[2] Տե՛ս **Բալայան Գ.,** նշվ. աշխ., էջ 178:

նորեն կիրառվող գնահատման չափանիշների, ընթացակարգերի օգնությամբ: Դրանք պետք է միտված լինեն գնահատելու ուսանողի կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը, ինչը պետք է իրականացվի հստակ նկարագրված և գնահատման ժամանակակից մեթոդաբանության կիրառմամբ: Նշված դրույթները կյանքի կոչելը ենթադրում է նաև դրա պատշաճ կատարում: Եթե ուսանողը նպատակ ունի որակյալ կրթություն ստանալու, ապա պետք է մասնակից լինի ուսումնական գործընթացի պարտադիր պայմաններին՝ ունկնդրի դասախոսություններ, մասնակցի գործնական պարապմունքներին, հանձնի ստուգարքներ, հանրագումարային քննություններ՝ ընդունելով, որ գիտելիքներն ու որակյալ կրթությունն են ինքնիրացման, մասնագիտական առաջընթացի ու կարիերայի հիմնական նախադրյալը:

Բարձրագույն կրթության բնագավառում որակի հետ կապված գիտական իրավաբանական գրականության, միջազգային և հայրենական իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս միասնական հասկացության բացակայությունը՝ սահմանելու ոչ միայն հենց «որակյալ կրթություն» հասկացությունը, այլ նաև դրա գնահատման մեթոդաբանությունը[1]: Բարձրագույն կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները շոշափում են ինչպես բարձրագույն կրթություն ստանալու երաշխիքները, այնպես էլ տարբեր միջոցներով դրա որակի ապահովման երաշխիքները: Դրա հետ մեկտեղ՝ աշխարհում կրթության ոչ մի իդեալական համակարգ գոյություն չունի: Կրթության յուրաքանչյուր համակարգ կապված է տվյալ երկրի պատմամշակութային ավանդույթների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի հետ:

КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО НА ПОЛУЧЕНИЕ ВЫСЩЕГО ОБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ ДОСТУПА К ОБРАЗОВАНИЮ

Сергей Бархударян
Доцент кафедры политологии и истории права АГПУ,
кандидат юридических наук

В статье рассматривается право на образование, как одно из основных и фундаментальных прав человека, которое предусмотрено в международно-правовых актах и гарантируется Конституцией Республики Армения. В рассматриваемых системах гарантий конституционного права на высшее образование подчеркивается, что в настоящее время качество высшего обравования выступает как одно из гарантий реализации соотвествующего конституционного права.

[1] Տե՛ս **Чугунова Е.С.** Конституционное право на высшее образование в РФ условиях глобализации. Автореферат дисс.канд.юрид.наук. М., 2010, էջ 12:

CONSTITUTIONAL RIGTH TO HIGHER EDUCATION IN THE CONTEXT OF THE ACCESS TO EDUCATION

Sergey Barkhudaryan
Associate Professor at the ASPU Chair of politology and history of Law,
Candidate og Legal Sciences

The article deals with the right to education as one of the basic and fundamental human rights provided in international legal documents, and is guaranteed by the Constitution of the Republic of Armenia. In these systems, the right of constitutional guarantees to higher education is emphasized stating that currently the quality of higher education is one of the guarantees of the constitutional right.

Բանալի բառեր – *Սահմանադրություն, սահմանադրական նորմեր, կրթական իրավունք, կրթական համակարգ, միջազգային իրավական ակտեր, պետական քաղաքականություն, որակ, երաշխիքներ, արտոնություններ*
Ключевые слова: *Конституция, конституционные нормы, образовательное право, образовательная система, международно-правовые акты, государственная программа, качество, гарантии, льготы*
Key words: *Constitution, constitutional norms,, education right, education sustem, internacional legal akts, state program, quality, quarantees, benefits*